ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հուլիսի 2024 թվականի N 1013 - Ա

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 153-րդ հոդվածի 3-րդ մասով, 154-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածով և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին (այսուհետ՝ ջրային կոմիտե) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել պետական սեփականություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի N 1893-Ա որոշմամբ ջրային կոմիտեին ամրացված՝ «Շենիկ» ջրօգտագործողների ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) անհատույց օգտագործման իրավունքով փոխանցված «Բագարան Նոր» պոմպակայանից սկիզբ առնող՝ D=400 մմ տրամագծով 3000 գծմ երկարությամբ ճնշումային խողովակաշարից 400 գծմ չօգտագործվող հատվածի

ապամոնտաժումը՝ 2500 գծմ օգտագործվող հատվածում ամբողջովին քայքայված վիճակում գտնվող 400 գծմ հատվածը փոխարինելու նպատակով:

2. Ջրային կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ընկերության տնօրենի հետ համատեղ՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի ապամոնտաժման աշխատանքների գործընթացը՝ ապամոնտաժված ամբողջովին քայքայված վիճակում գտնվող 400 գծմ հատվածի խողովակներն ի պահ հանձնելով ընկերությանը.

2) առաջարկել սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված գույքի ապամոնտաժման և մոնտաժման աշխատանքների հետ կապված անհրաժեշտ ծախսերն իրականացնել ընկերության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

04.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ